Գառան ամուսնությունը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

- Ինչո՞ւ են ընտանիքները հաճախ տոնում ամուսնությունը:

Հովհաննեսը օգտագործեց ամուսնության գաղափարը՝ վերջին օրերի մասին ուսուցանելու համար: Այդ ամուսնությունը խորհրդանշում է Փրկչի Երկրորդ Գալուստը:

Նկարեք հարսին և փեսային և գրեք, թե ինչ եք սովորել նրանց մասին ուսումնասիրության ընթացքում:

Կարդացեք Հայտնություն 19.7-9 հատվածները՝ տեսնելու համար, թե Տերն ինչ է ցանկանում, որ մենք զգանք այդ ամուսնության հանդեպ: Հարսը այս հատվածներում խորհրդանշում է Տիրոջ Եկեղեցու անդամներին, որոնք պատրաստվում են Քրիստոսի վերադարձին:

- Ըստ հատված 8-ի, մենք ինչպե՞ս պետք է պատրաստվենք այդ ամուսունությանը: Դա ի՞նչ կարող է նշանակելձեզ համար:

- Ինչպե՞ս է ամուսնությունը խորհրդանշում մեր ուխտի փոխհարաբերությունը Քրիստոսի հետ:

- Փրկչի վերադարձը ինչպե՞ս կարող է ուրախ օր լինել ձեզ համար:

Կարդացեք հետևյալ սուրբ գրությունները և մտածեք, թե դուք ինչ կարող եք անել՝ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստին պատրաստվելու համար: Կարող եք նշել ձեր գտածը կամ գրել այն ձեր օրագրում:

Հայտնություն 7.13–14

3 Նեփի 27.19-21

- Ի՞նչ եք զգում Հիսուս Քրիստոսի և Իր Երկրորդ Գալուստի համար ձեզ պատրաստելուն ուղղված Նրա օգնության հանդեպ:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *New Testament Doctrinal Mastery: Assessment 2—Study Guide*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.